# «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

# ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

## 1. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**ԲԱՆԿԻ ԱՆՎԱՆՈՒՄ. *«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ***
**ՀԱՍՑԵ. *ՀՀ, 0002 ԵՐԵՎԱՆ, ԱՄԻՐՅԱՆ 23/1***
**ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔ. *www.aeb.am***




## 2. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ

Խորհրդի նախագահի ուղերձը տեղակայված է Տարեկան հաշվետվությունում
https://www.aeb.am/uploads/hashvetvutyun_tarekan_2024.pdf

Սույն Հայտարարագրով ներկայացվող տեղեկատվությունը կազմված է 2025թ. (հաշվետու տարվա) վերջի դրությամբ:

## 3. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության և Կորպորատիվ Կառավարման Կանոնագրքի պահանջների, Բանկը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով,

բ) Խորհուրդ,

գ) Գործադիր մարմին՝ Գործադիր տնօրեն, որն ի պաշտոնե Բանկի Վարչության նախագահն է, Բանկի Վարչություն:

Բանկի նշանակալից բաժնետերերն են.

1. *Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի*, տիրապետում է *3,149,456* բաժնետոմս, որը կազմում է Բանկի կանոնադրական կապիտալի *25.99* %-ը:

2. *Սուքիասյան Խաչատուր Ալբերտի*, տիրապետում է *1,508,910* բաժնետոմս, որը կազմում է Բանկի կանոնադրական կապիտալի *12.45* %-ը:

3. *Սուքիասյան Էդուարդ Ալբերտի*, տիրապետում է *1,576,768* բաժնետոմս, որը կազմում է Բանկի կանոնադրական կապիտալի *13.01* %-ը:

## 4. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)

4.1. Հաշվետու տարում գումարվել են Տարեկան ընդհանուր ժողով և *1* արտահերթ ընդհանուր ժողով: Տարեկան ընդհանուր ժողովը գումարվել է առկա, իսկ արտահերթ ընդհանուր ժողովները՝ հեռակա քվեարկության կարգով:

4.2. Տարեկան ընդհանուր ժողովն անցկացվել է *13.06.2025թ.-ին*, արտահերթ ընդհանուր ժողովը անցկացվել է՝ *09.01.2025թ-ին*:

4.3. ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը, համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգի», ԲԸԺ-ի մասին ծանուցվել են *փոստով/էլ. փոստով/առձեռն փրամադրման միջոցով /համապետական լրագրում («Առավոտ» օրաթերթում) փպագրված ծանուցմամբ մինչև 23.05.25թ. և 10.12.24թ. համապատասխանաբար,* այն է ԲԸԺ-ից առնվազն *21* օր առաջ (հեռակա ժողովների դեպքում՝ առնվազն *30* օր առաջ): Օրակարգը և համապատասխան փաստաթղթերն ուղարկվել են, ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց հասանելի են դարձել Բանկի ինտերնետային կայքում, Բանկի Գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում:

Օրակարգի և ԲԸԺ-ին վերաբերող տեղեկությունները և փաստաթղթերը ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց տրամադրելու կարգը սահմանվում է Բանկի կանոնադրությամբ (կետ 6.8), հասանելի է Բանկի ինտերնետային կայքում.

https://www.aeb.am/uploads/kanonadrutyun_aeb.pdf

4.4. Բաժնետերերը հնարավորություն են ունեցել ԲԸԺ-ին մասնակցել լիազորված ներկայացուցչի միջոցով՝ համաձայն գործող օրենսդրության պահանջների:
4.5. Բաժնետերերը, Բանկի կանոնադրության _6.15_ կետով սահմանված կարգով, քվեարկել են կումուլյատիվ քվեարկությամբ:
4.6. Տարեկան ԲԸԺ-ի օրակարգը, քվեարկության արդյունքները և արձանագրությունը հասանելի են Բանկի ինտերնետային կայքում՝

https://www.aeb.am/media/2025/06/12785.pdf

## 5. ԽՈՐՀՈՒՐԴԸ

***Խորհրդի գործառույթները***

Բանկի կանոնադրության *6.14-6.28* կետերը սահմանում են Խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները, որոնք հասանելի են Բանկի ինտերնետային կայքում՝

https://www.aeb.am/uploads/kanonadrutyun_aeb.pdf

***Խորհրդի կազմը***

*31.12.2025թ.* դրությամբ, Բանկի Խորհուրդը բաղկացած է _6_ անդամից, որոնցից _6-ը_ ոչ գործադիր են, երկուսն՝ անկախ:

| **ԽՈՐՀՈՒՐԴ** | | | | |
|---|---|---|---|---|
| **Պաշտոնը և անունը** | **Գործադիր** | **Ոչ գործադիր** | **Անկախ** | **Խորհրդի անդամ է սկսած՝** |
| 1. Նախագահ՝ *Սարիբեկ Սուքիասյան* | - | *Ոչ գործադիր* | - | *1997թ.* |
| 2. Անդամ՝ *Արամ Խաչատրյան* | - | *Ոչ գործադիր* | - | *2023թ.* |
| 3. Անդամ՝ *Լուիզա Պետրոսյան* | - | *Ոչ գործադիր* | - | *2013թ.* |
| 4. Անդամ՝ *Պեր Ֆիշեր* | - | *Ոչ գործադիր* | *անկախ* | *2018թ.* |
| 5. Անդամ՝ *Հրանտ Սուվարյան* | - | *Ոչ գործադիր* | *անկախ* | *2020թ.* |
| 6. Անդամ՝ *Արամ Մելիքյան* | - | *Ոչ գործադիր* | - | *2012թ.* |

Խորհրդի անդամների համառոտ կենսագրությունները՝ ներառյալ Խորհրդի անկախ անդամների վերաբերյալ տվյալները, տարվա ընթացքում խորհրդի անդամների պաշտոնաթողության

և պաշտոնանկության, նրանց գործառույթների, ինչպես նաև Խորհրդի հանձնաժողովներին անդամության վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ստորև.

**Խորհրդի Նախագահ՝** ***Սարիբեկ Ալբերտի Սուքիասյան***

| | |
|---|---|
| **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ** | 07.09.1965թ. |
| **Քաղաքացիություն** | Հայաստանի Հանրապետություն |
| **Կրթություն** | **2000թ.** Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան (շնորհվել է Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի մասնագիտական խորհրդի որոշմամբ)<br>**1991թ.** Գյուղատնտեսության ղեկավար կադրերի և մասնագետների որակավորման բարձրացման մեկամյա հեռակա տնտեսագիտական ֆակուլտետ, գյուղատնտեսական ձեռնարկությունների կազմակերպիչ-տնտեսագետի որակավորում<br>**1982-1990թթ.** Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտ, անասնաբույծ-ինժեներ |
| **Մասնագիտություն / հիմնական որակավորում** | Տնտեսագետ, Տնտեսագիտության թեկնածու |
| **Հիմնական պաշտոն** | «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի նախագահ |
| **Խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը** | - |
| **Նշանակման օր** | 27.06.1998թ. |
| **Պաշտոնավարման ընթացիկ ժամկետ** | 1 տարի |
| **Աշխատանքային փորձառություն** | 35 տարի |
| **Բանկում աշխատած տարիները** | 29 տարի |
| **Տարվա ընթացքում պաշտոնաթողության և պաշտոնանկության վերաբերյալ տեղեկություններ** | - |
| **Վերջին 3 տարվա աշխատանքային փորձը** | **1998թ. առ այսօր** «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Խորհրդի նախագահ |
| **Բանկում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը** | «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ՝ 25.99% - 6,550,868,480 դրամ սովորական բաժնետոմսեր, 49.91% - 3,178,575,000 դրամ արտոնյալ բաժնետոմսեր |
| **Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի** | - |

| | |
|---|---|
| **հանձնաժողով(ներ)ին** | |
| **Անձնական պարտականությունները, գործառույթները և խնդիրները** | Ընդհանուր հսկողություն/ կառավարում |
| **Աշխատանքը այլ Ընկերություններում/ խորհուրդներում, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ** | «ՍԻԼԿոնցեռն» ՍՊԸ փոխնախագահ հասարակական հիմունքներով |

**Խորհրդի անդամ (Խորհրդի Նախագահի տեղակալ)՝ *Հրանտ Սուվարյան***

| | |
|---|---|
| **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ** | 07.07.1958թ. |
| **Քաղաքացիություն** | Հայաստանի Հանրապետություն |
| **Կրթություն** | 1974թ.-1979թ. Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ<br>1985թ. ավարտել է Մոսկվա քաղաքի ՍՍՀՄ Պետպլանին կից «Նորմատիվներ և պլանավորում» ԳՀԻ ասպիրանտուրան |
| **Մասնագիտություն / հիմնական որակավորում** | Տնտեսագետ |
| **Հիմնական պաշտոն** | <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Խորհրդի անդամ, Խորհրդի նախագահի տեղակալ |
| **Խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը** | անկախ |
| **Նշանակման օր** | 30.06.2020թ. |
| **Պաշտոնավարման ընթացիկ ժամկետ** | 1 տարի |
| **Աշխատանքային փորձառություն** | 45 տարի |
| **Բանկում աշխատած տարիները** | 6 տարի |
| **Տարվա ընթացքում պաշտոնաթողության և պաշտոնանկության վերաբերյալ տեղեկություններ** | - |
| **Վերջին 3 տարվա** | 2002-2020թթ. ՀՀ կենտրոնական բանկի Ֆինանսական |

| | |
|---|---|
| **աշխատանքային փորձը** | վերահսկողության վարչության պետ<br>2020թ.-ից <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Խորհրդի անդամ |
| **Բանկում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը** | - |
| **Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների խորհրդի հանձնաժողով(ներ)ին** | Աուդիտի հանձնաժողով<br>Ռիսկերի հանձնաժողով<br>Կադրային քաղաքականության հանձնաժողով |
| **Անձնական պարտականությունները, գործառույթները և խնդիրները** | Ապահովում է Կանոնադրության 6.22 կետով սահմանված գործառույթների իրականացումը |
| **Աշխատանքը այլ Ընկերություններում/ խորհուրդներում, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ** | - |

**Խորհրդի անդամ, Խորհրդի քարտուղար՝** ***Լուիզա Պետրոսյան***

| | |
|---|---|
| **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ** | 19.09.1982թ. |
| **Քաղաքացիություն** | Հայաստանի Հանրապետություն |
| **Կրթություն** | 1999թ.-2004թ. Երևանի Պետական Տնտեսագիտական Ինստիտուտ, բաժին՝ Մաթեմատիկական մեթոդներ և գործառնությունների հետազոտություն տնտեսագիտության մեջ |
| **Մասնագիտություն / հիմնական որակավորում** | Տնտեսագետ-մաթեմատիկոս |
| **Հիմնական պաշտոն** | <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Խորհրդի անդամ, Խորհրդի քարտուղար |
| **Խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը** | - |
| **Նշանակման օր** | 23.07.2013թ. |
| **Պաշտոնավարման ընթացիկ ժամկետ** | 1 տարի |
| **Աշխատանքային փորձառություն** | 21 տարի |

| | |
|---|---|
| **Բանկում աշխատած տարիները** | 21 տարի |
| **Տարվա ընթացքում պաշտոնաթողության և պաշտոնանկության վերաբերյալ տեղեկություններ** | - |
| **Վերջին 3 տարվա աշխատանքային փորձը** | 01.02.2011-13.06.2013թթ. - <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Միջազգային գործառնությունների վարչության պետի տեղակալ<br>14.06.2013թ. - առ այսօր - <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Խորհրդի անդամ, Խորհրդի քարտուղար |
| **Բանկում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը** | «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ 2,860.0 հազ. դրամ, 0.01% |
| **Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին** | Աուդիտի հանձնաժողով<br>Ռիսկերի հանձնաժողով<br>Կադրային քաղաքականության հանձնաժողով |
| **Անձնական պարտականությունները, գործառույթները և խնդիրները** | Ապահովում է Կանոնադրության 6.22 կետով սահմանված գործառույթների իրականացումը |
| **Աշխատանքը այլ Ընկերություններում/ խորհուրդներում, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ** | - |

**Խորհրդի անդամ՝ *Արամ Խաչատրյան***

| | |
|---|---|
| **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ** | 29.08.1983թ. |
| **Քաղաքացիություն** | Հայաստանի Հանրապետություն |
| **Կրթություն** | **2006թ.-2008թ.** Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ճարտարագիտական մենեջմենթ, ճարտարագիտության մագիստրոս<br>**2000թ.-2004թ.** Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (կապի ճյուղում), ճարտարագիտության բակալավր, գերազանցության դիպլոմ |

| | |
|---|---|
| **Մասնագիտություն / հիմնական որակավորում** | Ինժեներ-տնտեսագետ |
| **Հիմնական պաշտոն** | «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ անդամ |
| **Խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը** | - |
| **Նշանակման օր** | 09.06.2023թ. |
| **Պաշտոնավարման ընթացիկ ժամկետ** | 1 տարի |
| **Աշխատանքային փորձառություն** | 20 տարի |
| **Բանկում աշխատած տարիները** | 20 տարի |
| **Տարվա ընթացքում պաշտոնաթողության և պաշտոնանկության վերաբերյալ տեղեկություններ** | - |
| **Վերջին 3 տարվա աշխատանքային փորձը** | 2017-2023թթ. <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Գործադիր տնօրեն<br>09.06.2023թ.-ից առ այսօր <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Խորհրդի անդամ |
| **Բանկում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը** | «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ 4,409.6 հազ. դրամ, 0.02% |
| **Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին** | Ռիսկերի հանձնաժողով<br>Կադրային քաղաքականության հանձնաժողով |
| **Անձնական պարտականությունները, գործառույթները և խնդիրները** | Ապահովում է Կանոնադրության 6.22 կետով սահմանված գործառույթների իրականացումը |
| **Աշխատանքը այլ Ընկերություններում/ խորհուրդներում, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ** | - |

**Խորհրդի անդամ՝ *Պեր Ֆիշեր***

| | |
|---|---|
| **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ** | 19.09.1949թ. |

| | |
|---|---|
| **Քաղաքացիություն** | Գերմանիա |
| **Կրթություն** | 1978թ. ավարտել է Գյոթինգենի համալսարանի Սլավոնական ֆակուլտետը,<br>1985թ. ավարտել է Համբուրգի համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետը, մասնագիտացումը՝ տնտեսագետ |
| **Մասնագիտություն / հիմնական որակավորում** | Տնտեսագետ |
| **Հիմնական պաշտոն** | «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ |
| **Խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը** | անկախ |
| **Նշանակման օր** | 29.06.2018թ. |
| **Պաշտոնավարման ընթացիկ ժամկետ** | 1 տարի |
| **Աշխատանքային փորձառություն** | 36 տարի |
| **Բանկում աշխատած տարիները** | 10 տարի |
| **Տարվա ընթացքում պաշտոնաթողության և պաշտոնանկության վերաբերյալ տեղեկություններ** | - |
| **Վերջին 3 տարվա աշխատանքային փորձը** | **2003թ.– 2017թ.** - Գերմանա-Ուկրաինական համաժողով, Խորհրդի անդամ, Գանձապետ<br>**2003թ.– 2019թ.** - Կոմերցբանկ Եվրասիա, Մոսկվա, Խորհրդի անդամ<br>**2007թ.– առ այսօր** - Գերմանա-ռուսական համաժողով, Խորհրդի անդամ, Գանձապետ<br>**2014թ.– 2017թ.** -Գերմանա-թուրքմենական համաժողովի անդամ<br>**2014թ.– առ այսօր** - Սենթրինվեստբանկ (Դոնի Ռոստով, ՌԴ), Խորհրդի անդամ, անկախ տնօրեն<br>**2015թ.– 2019թ.** – ԵԱՀԿ եռակողմ կոնտակտային խմբի Տնտեսական հիմնախնդիրների և վերականգնման աշխատանքային խմբի համակարգող<br>**2016թ.– 2019թ.** – Բելառուսբանկ (Մինսկ, Բելառուսի Հանրապետություն), Խորհրդի անդամ, անկախ տնօրեն<br>**2018թ.-ից** «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Խորհրդի անդամ |

| | |
|---|---|
| **Բանկում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը** | |
| **Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների խորհրդի հանձնաժողով(ներ)ին** | Աուդիտի հանձնաժողով<br>Ռիսկերի հանձնաժողով |
| **Անձնական պարտականությունները, գործառույթները և խնդիրները** | Ապահովում է Կանոնադրության 6.22 կետով սահմանված գործառույթների իրականացումը, Բանկային գործունեության ընթացքում միջազգային փորձի ներդրման աշխատանքների համակարգում |
| **Աշխատանքը այլ Ընկերություններում/ խորհուրդներում, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ** | Հանդիսանում է Սենթրինվեստբանկ (Դոնի Ռոստով, ՌԴ), Խորհրդի անդամ, անկախ տնօրեն |

**Խորհրդի անդամ՝** ***Արամ Մելիքյան***

| | |
|---|---|
| **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ** | 27.04.1963թ. |
| **Քաղաքացիություն** | Հայաստանի Հանրապետություն |
| **Կրթություն** | **1980թ. - 1984թ** Երևանի Ժողովրդական տնտեսության ինստիտուտ, Պլանատնտեսագիտական ֆակուլտետ, նյութատեխնիկական մատակարարում և պլանավորում բաժին, մասնագիտացումը՝ տնտեսագետ |
| **Մասնագիտություն / հիմնական որակավորում** | Տնտեսագետ |
| **Հիմնական պաշտոն** | <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Խորհրդի անդամ |
| **Խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը** | - |
| **Նշանակման օր** | 01.08.2012թ. |
| **Պաշտոնավարման ընթացիկ ժամկետ** | 1 տարի |
| **Աշխատանքային փորձառություն** | 39 տարի |
| **Բանկում աշխատած տարիները** | 19 տարի |
| **Տարվա ընթացքում** | - |

| | |
|---|---|
| **պաշտոնաթողության և պաշտոնանկության վերաբերյալ տեղեկություններ** | |
| **Վերջին 3 տարվա աշխատանքային փորձը** | **2016-2023թթ.** «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամի պաշտոնը:<br>**2023-2024թթ.** «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Գործադիր տնօրենի խորհրդական<br>**21.06.2024թ. - առ այսօր** «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Խորհրդի անդամ |
| **Բանկում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը** | «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ 5,033.6 հազ. դրամ, 0.02% |
| **Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին** | - |
| **Անձնական պարտականությունները, գործառույթները և խնդիրները** | Ապահովում է Կանոնադրության 6.22 կետով սահմանված գործառույթների իրականացումը |
| **Աշխատանքը այլ Ընկերություններում/ խորհուրդներում, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ** | - |

***Խորհրդի գործունեությունը***

2025թ. տարվա ընթացքում, Խորհուրդը գումարել է *29* նիստ, որից *0-ն*՝ հեռակա քվեարկությամբ:

Խորհրդի անդամների մասնակցությունը Խորհրդի նիստերին ունի հետևյալ պատկերը.

| Պաշտոն և անուն | Նիստերի մասնակցությունը անձամբ | Նիստերի մասնակցությունը հեռակա կարգով | Նիստերի քանակը, որոնց պետք է մասնակցեր |
|---|---|---|---|
| 1. Նախագահ՝ *Սարիբեկ* | 26 | 0 | 29 |

| | | | |
|---|---|---|---|
| <u>*Ալբերտի Սուքիասյան*</u> | | | |
| 2. Անդամ՝ <u>*Արամ Խաչատրյան*</u> | 26 | 0 | 29 |
| 3. Անդամ՝ <u>*Լուիզա Պետրոսյան*</u> | 28 | 0 | 29 |
| 4. Անդամ՝ <u>*Պեր Ֆիշեր*</u> | 26 | 0 | 29 |
| 5. Անդամ՝ <u>*Հրանտ Սուվարյան*</u> | 27 | 0 | 29 |
| 6. Անդամ՝ <u>*Արամ Մելիքյան*</u> | 26 | 0 | 29 |

***Խորհրդի աշխատանքի գնահատումը***

Խորհուրդը ընդունել է գնահատման քաղաքականություն՝ ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի աշխատանքների կազմակերպման կարգ»:

Խորհուրդն իրականացրել է ինքնագնահատում ՝ համաձայն վերը նշված կարգում սահմանված գնահատման չափանիշների քաղաքականության և ընթացակարգերի:

Գնահատման արդյունքում արված հիմնական առաջարկներն են.

<u>*Խորհրդի 2025թ. գործունեությունը գնահատվել է հիմնականում բավարար:*</u>

## 6. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Բանկում գործում են՝ Աուդիտի հանձնաժողով, Ռիսկերի հանձնաժողով և Կադրային քաղաքականության հանձնաժողով:

***Աուդիտի հանձնաժողով***

Բանկում գործում է Աուդիտի հանձնաժողով:

## 7. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Բանկի գործադիր մարմինը բաղկացած է Վարչության <u>*7*</u> *անդամներից.*

***Վարչության նախագահ/Գործադիր տնօրեն. Արտակ Առաքելյան***

| | |
|---|---|
| **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ** | 28.05.1981թ. |
| **Կրթություն** | **2003-2004թթ.** Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության Տնտեսագիտական Հետազոտությունների Ինստիտուտ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու |

| | |
|---|---|
| | **1998-2003թթ.** Երևանի Պետական Տնտեսագիտական Ինստիտուտ |
| **Աշխատանքային փորձառություն** | 21 տարի |
| **Հիմնական որակավորումը** | Տնտեսագետ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու |
| **Բանկում աշխատած տարիները** | 21 տարի |
| **Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին** | - |
| **Անձնական պարտականությունները և խնդիրները** | ✓ տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները և գործարքներ է կատարում Բանկի անունից.<br>✓ ներկայացնում է Բանկը ՀՀ-ում և արտասահմանում,<br>✓ գործում է առանց լիազորագրի,<br>✓ տալիս է լիազորագրեր,<br>✓ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային,<br>✓ Խորհրդի հաստատմանն է ներկայացնում իր տեղակալների թեկնածությունները,<br>✓ Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի Վարչության կանոնակարգը,<br>✓ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,<br>✓ կատարում է Բանկի վարչության նախագահի տեղակալների և վարչության անդամների միջև պարտականությունների բաշխում,<br>✓ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Բանկի աշխատակիցներին,<br>✓ Բանկի աշխատակիցների նկատմամբ, համաձայն Խորհրդի հաստատած կարգի, կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,<br>✓ լուծում է Բանկի կանոնադրությամբ իրեն վերապահված այլ հարցեր: |

***Վարչության նախագահի տեղակալ/Գործադիր տնօրենի տեղակալ. Ռուբեն Բաղալյան***

| | |
|---|---|
| **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ** | 13.05.1979թ. |

| | |
|---|---|
| **Կրթություն** | **1995-2000թթ.** Երևանի ժողովրդական տնտեսության պետական ինստիտուտ, Ֆինանսահաշվային ֆակուլտետ |
| **Աշխատանքային փորձառություն** | 23 տարի |
| **Հիմնական որակավորումը** | Տնտեսագետ |
| **Բանկում աշխատած տարիները** | 23 տարի |
| **Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին** | - |
| **Անձնական պարտականությունները և խնդիրները** | Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը |

***Վարչության նախագահի տեղակալ/Գործադիր տնօրենի տեղակալ. Օնիկ Չիչյան***

| | |
|---|---|
| **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ** | 19.03.1977թ. |
| **Կրթություն** | 1996-2000թթ. Հայկական Գյուղատնտեսական Ակադեմիա, Տնտեսագիտական ֆակուլտետ, Հաշվապահական հաշվառում և աուդիտ, տնտեսագետ |
| **Աշխատանքային փորձառություն** | 24 տարի |
| **Հիմնական որակավորումը** | Տնտեսագետ |
| **Բանկում աշխատած տարիները** | 23 տարի |
| **Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին** | - |
| **Անձնական պարտականությունները և խնդիրները** | Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը |

***Վարչության նախագահի տեղակալ/Գործադիր տնօրենի տեղակալ. Վահե Ղազարյան***

| | |
|---|---|
| **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ** | 21.02.1988թ. |
| **Կրթություն** | 2006-2010թթ. Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան, «ֆինանսական» ֆակուլտետ |
| **Աշխատանքային փորձառություն** | 18 տարի |
| **Հիմնական որակավորումը** | Տնտեսագետ |

| | |
|---|---|
| **Բանկում աշխատած տարիները** | 9 տարի |
| **Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին** | - |
| **Անձնական պարտականությունները և խնդիրները** | Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը |

***Վարչության անդամ. Նոնա Գալստյան***

| | |
|---|---|
| **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ** | 13.01.1977թ. |
| **Կրթություն** | **1998թ**. Երևանի պետական համալսարանի «Ընդհանուր տնտեսագիտություն» ֆակուլտետը՝ ստանալով տնտեսագետի որակավորում |
| **Աշխատանքային փորձառություն** | 26 տարի |
| **Հիմնական որակավորումը** | Տնտեսագետ |
| **Բանկում աշխատած տարիները** | 24 տարի |
| **Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին** | - |
| **Անձնական պարտականությունները և խնդիրները** | Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը |

***Վարչության անդամ. Վրեժ Ջհանգիրյան***

| | |
|---|---|
| **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ** | 29.03.1980թ. |
| **Կրթություն** | **2000թ.-2002թ.** Երևանի պետական համալսարան, Իրավագիտություն ֆակուլտետ, Իրավագիտության ֆակուլտետ. մագիստրոս<br>**1996թ.-2000թ.** Երևանի պետական համալսարան, Իրավագիտության ֆակուլտետ, իրավաբան, բակալավր, գերազանցության դիպլոմ |
| **Աշխատանքային փորձառություն** | 25 տարի |
| **Հիմնական որակավորումը** | Իրավաբան |

| | |
|---|---|
| **Բանկում աշխատած տարիները** | 13 տարի |
| **Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին** | - |
| **Անձնական պարտականությունները և խնդիրները** | Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը |

***Վարչության անդամ. Հակոբ Մաթևոսյան***

| | |
|---|---|
| **Ծննդյան օր, ամիս, տարեթիվ** | 13.04.1987թ. |
| **Կրթություն** | **2009թ.-2012թ.** Երևանի պետական համալսարան, Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա ֆակուլտետ, Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի մագիստրոսի աստիճան, գերազանցության դիպլոմ<br>**2003թ.-2009թ.** Երևանի պետական համալսարան, Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա ֆակուլտետ, մաթեմատիկայի բակալավրի աստիճան |
| **Աշխատանքային փորձառություն** | 22 տարի |
| **Հիմնական որակավորումը** | ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի մագիստրոս |
| **Բանկում աշխատած տարիները** | 2 տարի |
| **Անդամությունը Բանկի կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին** | - |
| **Անձնական պարտականությունները և խնդիրները** | Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը |

## 8. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Բանկի ներքին աուդիտն իրականացվում է Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից, որը հաշվետու է Խորհրդին:

## 9. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Բանկը կորպորատիվ քարտուղար չունի: Վերջինիս գործառույթները վերապահվում են *Խորհրդի անդամ, Խորհրդի Քարտուղար Լուիզա Պետրոսյանին*: Խորհրդի Քարտուղարը իր գործառույթներն իրականացնում է համաձայն Խորհրդի Կանոնակարգի՝ հաստատված Ժողովի կողմից:

## 10. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձն ընտրվում է յուրաքանչյուր տարի, մրցութային կարգով՝ համաձայն գործող կարգի: Որպես 2025թ. աուդիտոր մրցույթում հաղթել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն որն արտաքին աուդիտն իրականացնող անձի պարտականությունները մրցութային կարգով իրականացնում է 2025թ.-ից:

Համաձայն Կանոնագրքի Բանկը ներդրել է չափորոշիչներ՝ որոշելու արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախությունը Բանկից:

## 11. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բանկի տարեկան հաշվետվությունը ներկայացվել և հաստատվել է Բաժնետերերի ընդհանուր ժողովում՝ *13.06.2025թ.-ին* :

Տարեկան հաշվետվությունը պարունակում է Կանոնագրքով սահմանված ողջ տեղեկությունները և տեղադրված է Բանկի ինտերնետային կայքում՝ https://www.aeb.am/uploads/hashvetvutyun_tarekan_2024.pdf:

Ստորագրված է *30.04.2026թ.*

______________________________

Խորհրդի նախագահ

______________________________

Գործադիր տնօրեն

ARMECONOMBANK
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

# *Գլուխ I. Մասնակիցների հիմնական իրավունքներ, հավասար վերաբերմունք մասնակիցների նկատմամբ և նշանակալից մասնակիցների պարտականություններ*

## ՍԿԶԲՈՒՆՔ I.1. Կազմակերպության կառավարմանը մասնակցելու բաժնետիրոջ իրավունքը

***Կազմակերպությունը պարտավոր է ապահովել հավասար և արդարացի վերաբերմունք նույն տեսակի (դասի) բոլոր բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ՝ նրանց կողմից կազմակերպության կառավարմանը մասնակցելու ու քվեարկելու իրենց իրավունքներն արդյունավետ իրականացնելու, ժողովի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ հիմնավորված դիրքորոշում ձևավորելու և տեղեկացված որոշում կայացնելու համար:***

**<u>Հայտարարագրում</u>**

| | Դրույթ | Համապատասխանության կարգավիճակը | | | Բացատրություն |
|---|---|---|---|---|---|
| I.1.1. | Մասնակիցը ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ պատշաճ ծանուցվում է ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվի, վայրի, ձևաչափի և օրակարգի մասին, ինչպես նաև հնարավորություն է ունենում ծանոթանալ ընդհանուր ժողովում քննարկվելիք որոշումների նախագծերին, փաստաթղթերին և անհրաժեշտ այլ տեղեկատվությանը: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |
| I.1.2. | Ընդհանուր ժողովի հրավիրման վայրն ու օրը (ժամը) չեն սահմանափակում ընդհանուր ժողովին բաժնետիրոջ մասնակցությունը: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |
| I.1.3. | Ընդհանուր ժողովի վարման կանոններն ու ընթացակարգերը հավասար վերաբերմունք են ապահովում միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I.1.4. | Ընդհանուր ժողովի վարման կանոններն ապահովում են ընդհանուր ժողովում ձայների պատշաճ հաշվարկը ու հաշվառումը, ինչպես նաև քվեարկության արդյունքների ժամանակին հրապարակումը: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |
| I.1.5. | Ժողովի վարման կանոնները և ընթացակարգերը հրապարակվում են կազմակերպության համացանցային էջում: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |
| I.1.6. | Անկախ քվեարկության կարգից՝ բաժնետերերի ձայներին տրվում է հավասար նշանակություն: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |
| I.1.7. | Ընդհանուր ժողովում բաժնետերը հնարավորություն ունի հարցեր տալ խորհրդի և գործադիր մարմնի անդամներին, աուդիտորին և ստանալ պատասխան: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |
| I.1.8. | Ընդհանուր ժողովի ընթացքում բաժնետերերը հնարավորություն ունենն հաղորդակցվելու միմյանց հետ՝ քվեարկության դրված հարցի վերաբերյալ որոշում կայացնելու կամ հարցի էությունը պարզաբանելու համար: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I.1.9. | Կազմակերպությունը հավասարակշռում է համատեղ ներկայությամբ և հեռավար ժողովների գումարումը: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | Համատեղ ներկայությամբ և հեռավար ժողովների գումարումը պայմանավորված է քննարկվող հարցերի շրջանակով և բանկը դրանց քանակների հավասարակշռման հատուկ նպատակ չի հետապնդում: |

## ՍԿԶԲՈՒՆՔ I.2. Կազմակերպության խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման բաժնետիրոջ իրավունքը

***Կազմակերպության կորպորատիվ կառավարման համակարգը պետք է խթանի մասնակցի արդյունավետ մասնակցությունը խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման և խորհրդի անդամների ընտրության գործընթացին:***

**Հայտարարագրում**

| | Դրույթ | Համապատասխանության իրավիճակը | | | Բացատրություն |
|---|---|---|---|---|---|
| I.2.1. | Մասնակիցը ողջամիտ ժամկետներում ամբողջական և բավարար տեղեկատվություն է ստանում խորհրդի անդամների թեկնածուների մասնագիտական որակավորման և փորձառության, անցյալում և ներկայում զբաղեցրած պաշտոնների, կազմակերպության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) նշանակալից բաժնետեր լինելու մասին: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |

## ՍԿԶԲՈՒՆՔ I.3. Կազմակերպության խորհրդի և գործադիր մարմնի անդամների վարձատրության քաղաքականությունը

***Մասնակիցը պետք է հնարավորություն ունենա կարծիք հայտնել խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության վերաբերյալ, այդ թվում՝ ընդհանուր ժողովում քվեարկության միջոցով:***

**Հայտարարագրում**

| | Դրույթ | Համապատասխանության կարգավիճակը | Բացատրություն |
|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I.3.1. | Կազմակերպությունն ունի խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք արտահայտում են խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության ու կազմակերպության գործունեության երկարաժամկետ արդյունքների, այդ թվում՝ կայունության թիրախների միջև կապը: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | Խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության քաղաքականությունը իրականացվում է Բանկի անձնակազմի վարձատրության ընդհանուր քաղաքականությունը սահմանող հետևյալ ներքին իրավական ակտերի համաձայն. ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կադրային քաղաքականության (ներքին կարգապահական կանոններ)» կարգ, ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խրախուսանքների և տույժերի» կարգ |
| I.3.2. | Խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության քաղաքականությունը, վարձատրության սխեմաները և դրանց փոփոխությունները խորհրդի առաջարկով հաստատվում են ընդհանուր ժողովի կողմից, եթե գործադիր մարմնի մասով այդ իրավասությունը վերապահված չէ խորհրդին: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | Համաձայն Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված՝ ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի» կանոնակարգի և Բանկի Կանոնադրության՝ Խորհրդի անդամների վարձատրությունը սահմանվում է Խորհրդի կողմից: |
| I.3.3 | Խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության քաղաքականությունները բացահայտվում են կազմակերպության համացանցային էջում: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | Խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության քաղաքականությունները չեն բացահայտվում կազմակերպության համացանցային էջում: |

## ՍԿԶԲՈՒՆՔ I.4. Շահաբաժին ստանալու մասնակցի իրավունքը

***Կազմակերպությունը միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի համար պետք է ապահովի հավասար և արդար վերաբերմունք մասնակցելու կազմակերպության շահույթի բաշխմանը շահաբաժին ստանալու միջոցով:***

**<u>Հայտարարագրում</u>**

| # | Դրույթ | Համապատասխանության կարգավիճակը | | | Բացատրություն |
|---|---|---|---|---|---|
| I.4.1. | Կազմակերպությունն ունի շահաբաժինների վճարման քաղաքականություն և դրա կիրառումն ապահովող ընթացակարգեր: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I.4.2. | Խորհուրդը մշակել և հաստատել է շահաբաժինների վճարման քաղաքականությունը: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |
| I.4.3. | Շահաբաժինների վճարման քաղաքականությունը հրապարակվում է Կազմակերպության համացանցային էջում: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |
| I.4.4. | Շահաբաժինների վճարման ընթացակարգերը ապահովում են հավասար վերաբերմունք միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |

## ՍԿԶԲՈՒՆՔ I.5. Նշանակալից բաժնետիրոջ պարտականությունները

***Կազմակերպությունն ի շահ նշանակալից մասնակիցների կամ անմիջականորեն նշանակալից մասնակիցների կողմից կապարվող չարաշահումներից պետք է պաշտպանի փոքր բաժնեմասնակցություն ունեցող մասնակիցներին:***

**<u>Հայտարարագրում</u>**

| # | Չափորոշիչ | Համապատասխանության կարգավիճակը | | | Բացատրություն |
|---|---|---|---|---|---|
| I.5.1. | Կազմակերպության նշանակալից բաժնետերը բացահայտում է կազմակերպության հետ կնքվող գործարքներում կամ կազմակերպության վրա ուղղակիորեն ազդող հարցերում իր ուղղակի, անուղղակի կամ երրորդ անձանց անունից հանդես գալու իր հնարավոր էական շահը և չի մասնակցում տվյալ գործարքի կամ հարցի հետ կապված որոշման ընդունմանը: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I.5.2. | Կազմակերպության նշանակալից բաժնետերը բացահայտում է խորհրդի և գործադիր մարմնի անդամների հետ իր ունեցած փոխկապակցվածությունը: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |

## *Գլուխ II. Խորհուրդ*

### ՍԿԶԲՈՒՆՔ II.1. Խորհրդի առանցքային գործառույթները

***Կազմակերպությունը պետք է առաջնորդվի արդյունավետ և կառուցողական խորհրդի կողմից, որի դերն է նպաստել կազմակերպության երկարաժամկետ հաջողությանը, մասնակիցների համար արժեքի ստեղծմանը և կազմակերպության շահակիցներին աջակցմանը:***

**Հայտարարագրում**

| # | Չափորոշիչ | Համապատասխանության կարգավիճակը | | | Բացատրություն |
|---|---|---|---|---|---|
| II.1.1. | Խորհուրդն իրականացնում է Կանոնագրքով իրեն վերապահված գործառույթները: | Համապատասխանում է | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |

### ՍԿԶԲՈՒՆՔ II.2. Խորհրդի կազմը

***Խորհրդի անդամները պետք է ունենան միմյանց լրացնող մասնագիտական պարապետսակ ունակություններ, կրթություն և փորձառություն:***

***Խորհրդի գործունեության արդյունավետության և որոշումների օբյեկտիվության ու հավասարակշռվածության ապահովման նպատակով կազմակերպությունը պետք է ապահովի խորհրդի կազմի բազմազանությունը:***

**Հայտարարագրում**

| # | Դրույթ | Համապատասխանության կարգավիճակը | | | Բացատրություն |
|---|---|---|---|---|---|
| II.2.1. | Կազմակերպությունը սահմանել է խորհրդի և գործադիր մարմնի բազմազանության քաղաքականություն և բազմազանության նպատակային ցուցանիշներ: | Համապատասխանում է | **Համապատասխանում է մասամբ** | Չի համապատասխանում | Կառավարման մարմիններում բազմազանության քաղաքականությունն իրականացվում է համապատասխան թեկնածուների ընտրության և առաջադրման գործընթացի շրջանակներում: Բազմազանության առանձին նպատակային ցուցանիշներ չեն սահմանվում: |
| II.2.2. | Խորհրդի անդամներն ունեն միմյանց լրացնող մասնագիտական տարատեսակ ունակություններ, կրթություն և փորձառություն: | **Համապատասխանում է** | Համապատասխանում է մասամբ | Չի համապատասխանում | |
| II.2.3. | Խորհրդում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը պակաս չէ 30%-ից: | Համապատասխանում է | **Համապատասխանում է մասամբ** | Չի համապատասխանում | Խորհրդում կանանց թիվը պակաս է 30%-ից: Բազմազանության առանձին նպատակային ցուցանիշներ չեն սահմանվում: |

## ՍԿԶԲՈՒՆՔ II.3. Խորհրդի ոչ գործադիր անդամները

***Խորհրդի ոչ գործադիր անդամները պետք է իրենց կառուցողական վարքագծով խնդիրներ առաջադրեն գործադիր մարմնին, ուղղորդեն կազմակերպության ռազմավարական զարգացումը, գործադիր մարմնին առաջարկեն իրենց խորհրդապրվական աջակցությունը:***

**Հայտարարագրում**

| # | Դրույթ | Համապատասխանության կարգավիճակը | | | Բացատրություն |
|---|---|---|---|---|---|
